Արձանագրություն N 2
ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նիստի

2 նոյեմբերի 2016թ
ք. Երևան սկիզբը՝ ժամը՝ 10^{00}-ին
ավարտը՝ ժամը 12^{00}-ին

Նիստը նախագահում էր ՀՀ գյուղատնտեսության նախարար, խորհրդի նախագահ

Ի. Առաքելյանը

Մասնակցում էին՝

խորհրդի անդամներ.

Ա.Թարվերդյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր
Հ. Ջավադյան	Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան
Գ.Սարդարյան	«Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ն. Մանուկյան	«Արենի» փառատոն» հիմնադրամի տնօրեն
Վ. Համբարձումյան	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ
Ս. Ավդալյան	«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ա.Ղազանչյան	«Զարգացման սկզբունքներ» հասարակական կազմակերպության նախագահ
Ն.Դարբինյան	«Էկո-Գլոբ» բնապահպանական հասարակական կազմակերպության նախագահ
Հ.Հարությունյան	«Հայ գինեգործների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ
Հ.Հովհաննիսյան	«Հայկական պտղատնկարանների ասոցիացիա» գյուղատնտեսական հասարակական կազմակերպության նախագահ
Հ. Ջհանգիրյան	Հայաստանի Հանրապետության ագրոարդյունաբերողների համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

միության նախագահ

Ս.Ստեփանյան Հայաստանի Հանրապետության թռչնաբույծների միության նախագահ

Ա. Բիլյան «Մսամթերք արտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

Ռ.Ծառուկյան «Մուլտի Ագրո» գիտարտադրական կենտրոն» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ

Վ.Ղազարյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» անդամ

Հարգելի պատճառներով բացակայում էին խորհրդի հետևյալ անդամները՝

Ա. Գրիգորյան «Հայկական կոնյակագործների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

Ա. Ոսկանյան ՀՀ Ազգային ագրարային համալսարան «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի» տնօրեն

Վ. Ուռուտյան «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի ղեկավար

Ե. Թարվերդյան «Հայաստանի պահածոյագործների և հյութարտադրողների միություն» իրավաբանական անձանց միության նախագահ

Ա. Գոմկցյան «Օքսֆամ» հայաստանյան մասնաճյուղի գյուղատնտեսական ծրագրերի պատասխանատու

Հրավիրված էին՝

Ա. Պետրոսյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի խորհրդական

Ա.Սմբատյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի մամուլի քարտուղար

Ս. Սիմոնյան ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Օրակարգ

1. ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի մշակման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

   (Զեկուցող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի անդամ, ՀԱԱՀ «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան Հր. Ջավադյան)

2. ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները և հնարավորությունները:

   (Զեկուցող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի անդամ,«Էկո-Գլոբ» ՀԿ նախագահ Ն. Դարբինյան)

Նիստի սկզբում բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարար, հասարակական խորհրդի նախագահ **Ի. Առաքելյանը**:

Ողջունելով խորհրդի անդամներին՝ նախարարը հակիրճ ներկայացրեց նոր կառավարության ծրագրով գյուղատնտեսության ոլորտի զարգացմանն ուղղված առաջնահերթությունները: Նա մասնավորապես նշեց, որ արդեն նախարարությունը ձեռնամուխ է եկել նաև երկարաժամկետ ծրագրի մշակմանը՝ կարևորելով խորհրդի անդամների դիտողություններն ու առաջարկները գյուղատնտեսության զարգացման քաղաքականության ծրագրավորման հարցում: Նախարարի խոսքով՝ ծրագրում ներառված են իրատեսական մոտեցումներ և հաշվի առնելով բյուջետային միջոցների սուղ լինելու հանգամանքը՝ կազմվել է այնպիսի ծրագիր, որը հետաքրքրություն կառաջացնի մասնավոր ներդրողների շրջանում:

Այնուհետև խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ֆակուլտետի դեկան **Հ. Ջավադյանը**: (զեկույցը կցվում է)

Հ. Ջավադյանը կարևորեց Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիայի շարժման խթանումը, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որով իրավական հիմքեր ստեղծվեցին կոոպերատիվների գործունեության խթանման համար:

Զեկուցողի խոսքով՝ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման գործընթացը սկսել է ակտիվանալ վերջին տարիներին. ձևավորված շուրջ 306 սպառողական

կոոպերատիվներից գյուղատնտեսական բնույթ ունեն 225-ը: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում մինչև այժմ ստեղծվել և գործում են արոտօգտագործողների 153 սպառողական կոոպերատիվներ, սակայն շարժումը դեռևս բավարար թափ չի հավաքել, և առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝

-հաճախ կոոպերատիվներում անդամագրվում են մարդիկ, որոնք դժվարությամբ են համակերպվում կոլեկտիվի հետ, չունեն կոլեկտիվ մտածելակերպ,

-դեռևս համընդհանուր բնույթ է կրում բոլոր գյուղաբնակների մոտ թույլ տեղեկացվածությունը և իմացությունը կոոպերատիվների առավելությունների, շուկայական գների, իրացման լավագույն ուղիների առաջավոր փորձի և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ,

-դիտարկումները ցույց են տալիս, որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ որոշ սեմինարավարներ բավարար մակարդակով չեն տիրապետում կոոպերացման դրույթներին, և նրանց անհիմն տեսակետները ոչ միայն նպաստում են սկսված գործընթացին, այլ վեր են ածվում արգելքների: Առաջարկվել է այս նպատակով օգտագործել ՀԱԱՀ մասնագիտական ներուժը,

-ապահոված չէ միատեսակ իրավական դաշտ համանման գյուղատնտեսական արտադրանք արտադրող սուբյեկտների համար,

-ձևավորված մեխանիզմները բավարար չեն գյուղատնտեսական ապրանք արտադրողների, վերամշակող ընկերությունների և սպառողների կապերի ամրապնդման համար:

Զեկուցողն առաջարկել է հիմք ընդունելով «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը՝ արագ ընթացք տալ գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին, և այդ աշխատանքների իրականացման համար ձևավորել ծրագրի մշակման պատասխանատու խումբ, ինչպես նաև հանդես է եկել ծրագրի մշակման վերաբերյալ մի շարք առաջարկներով:

Զեկույցի վերաբերյալ ելույթներ ունեցան, առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ա. Թարվերդյանը, Ա. Ղազանչյանը**, **Ա. Հարությունյանը, Վ. Համբարձումյանը, Ս. Ստեփանյանը, Գ. Սարդարյանը**:

Ա. Ղազանչյանը –Ես երկու նկատառում ունեմ կոոպերատիվների վերաբերյալ: Նախ՝ անհրաժեշտ է հստակեցնել կոոպերատիվների իրավական կարգավիճակը: Եվ երկրորդ՝ միայն ուսուցում ստանալով կոոպերատիվ չեն ստեղծում. կոպերատիվների ստեղծումը սկսվում է համայնքի մոբիլիզացումից, կա համապատասխան մեթոդաբանություն, և ես չեմ կարծում, որ մեր ագրարային համալսարանը ունի մասնագետներ, ովքեր տիրապետում են այդ մեթոդաբանությանը, սակայն մենք կարող ենք աջակցել:

Հ. Ջավադյանը չհամաձայնեց հնչեցված տեսակետի հետ՝ շեշտելով, որ ՀԱԱՀ-ն ունի բավարար մասնագիտական ներուժ, և այսօր էլ այնտեղ դասավանդվում է «Գյուղատնտեսական կոոպերատիվներ» առարկան:

Ս. Ստեփանյան- Որքանո՞վ է այսօր գործող «Գյուղատնտեսության կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը նպաստում կոոպերատիվների ստեղծմանը: Օրենքը մեկ տարի կիրառության մեջ է, ի՞նչ եք կարծում ունի բացեր, և կարիք կա՞ փոփոխություններ, շտկումներ և լրացումներ կատարելու: Մենք չունեինք գյուղացիական տնտեսությունների դեպի ֆերմերային տնտեսությունների անցման գաղափարի ճիշտ ձևակերպումը, չգիտեինք՝ ով է ֆերմերը, որոնք են նրա իրավունքներն ու պարտականությունները, չունեինք գյուղատնտեսության կամ գյուղմթերք արտադրողների մասին օրենք, սակայն անցանք առաջ և ընդունեցինք այս բավականին պրոգրեսիվ օրենքը: Եվ այն ծրագիրը, որը նախատեսված է ընդունել ըստ այս օրենքի, ո՞վ է լինելու դրա վերահսկման պատասխանատուն:

Հ. Ջավադյան-Օրենքի ընդունումը շատ կարևոր էր և անհրաժեշտություն, սակայն այն ժամանակ էլ մենք համոզված էինք, որ այն ունենալու է նաև բաց տեղեր: Օրենքը կարևոր հիմքեր է ստեղծում կոոպերատիվների զարգացման համար, սակայն անշուշտ մեկ տարի անցել է, և կան հարցեր, որոնք փոփոխություններ անելու կարիք ունեն: Ինչ վերաբերում է ծրագրի մշակման և իրականացման պատասխանատուներին, ապա այդ հարցը հստակ կարգավորված է օրենքի 8-րդ հոդվածով, համաձայն որի պատասխանատուն հանդիսանում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Գագիկ Սարդարյան-Հայաստանում չկա պրակտիկա, երբ գյուղացիներն ինքնակամ եմ միացել, դրանք ստեղծվում են կազմակերպությունների, ծրագրերի շրջանակում: Ամբողջ աշխարհում գոյություն ունի կոոպերատիվների ստեղծման երկու ձև՝ մեկը դիկտատուրան է, երբ ուժի միջոցով ստեղծվում են կոլտնտեսություններ, մյուսը՝ ազատ, ժողովրդավար պայմաններում ստեղծվող ֆերմերային տնտեսություններն են, որոնք համախմբվում են գաղափարի շուրջ: Հիմա մենք ունենք օրենք սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին: Եթե օրենք չի լինելու այն մասին, ըստ որի համայնքի անդամներն ինքնակամ համայնքի ղեկավարի օժանդակությամբ կամ աջակցությամբ միավորվում են և ստեղծվում է կոոպերատիվ, այդ ամենը թղթի վրա գրված էլ կմնա: Մինչ այժմ ստեղծված կոոպերատիվները գործում են որպես ՍՊԸ-ներ, ես չեմ տեսել, որ որևէ կոոպերատիվում լինի ժողով, քննարկումներ, նախագահ փոխվի: Այստեղ կա օրենքի խնդիր, մենք պետք է կարողանանք ձևակերպել մի օրենք, որը հնարավորություն կտա գյուղացիներին առանց դոնորի կամ պետության միջամտության ազատ կամարտահայտությամբ միավորվել և լուծարվել:

Ա. Հարությունյան-Այս բոլոր առաջարկությունները լողզելու և գործ չանելու առաջարկություններ են: Գինեգործության, խաղողագործության կոոպերատիվը չի կարող համեմատվել անասնապահական կոոպերատիվի հետ, դրանց աշխատանքի և գոյության փիլիսոփայությունները տարբեր են: Հին մոդելների հիման վրա գրված առաջարկներն են,

կա կոնկրետ միջազգային փորձ, որը պետք էր ուսումնասիրել: Օրենքը որևէ կապ չունի, օրենքը շատ լավն է, կոոպերատիվը պիտի նույն հարկային դաշտում լինի, ինչ մյուս տնտեսավարող սուբյեկտները:

Ա. Թարվերդյան-Մենք քննարկում ենք այսօր մեր երկրի գյուղատնտեսության ագրոպարենային ոլորտի առջև ծառացած մի շատ կարևոր հարց: Կոոպերացիայի տարբեր ձևեր և եղանակներ կան, որոնք պետք է քննարկել: Մենք խոսում ենք ֆերմերների, գյուղացիների, վերամշակողների մասին, սակայն չենք հարցրել նրանց կարծիքը: Գյուղացին շատ լավ է հասկանում իր լավն ու վատը, մենք պետք է գյուղացուն լսենք, և հասկանանք, թե որտեղ է ինքը ռիսկեր տեսնում, ինչու չի գնում կոոպերացման: 1999 թվականից կոոպերացիայի հարցը պարբերաբար քննարկվում է կոլեգիայի, հասարակական խորհրդի նիստերում և խորհրդակցություններում: Առաջարկում եմ կազմավորել խումբ հասարակական խորհրդի անդամներից, ովքեր մտահոգ են այս հարցով, մենք կտրամադրենք լսարան, գյուղացիական տնտեսություններին և ֆերմերներին բերենք մայրաքաղաք և լայն աշխատանքային քննարկում ծավալենք, որից հետո կմշակվեն օրենքի փոփոխությունները, ծրագիրը, կանոնակարգն ու ընթացակարգը:

Վ. Համբարձումյան-Գյուղացիների մտահոգություններից մեկն այն է, որ նրանք կոոպերատիվներ ստեղծելով կհայտնվեն հարկային դաշտում: Շատ քիչ կոոպերատիվներ կան, որոնք ինքնաբուխ են ստեղծվել, դրա համար շատ լուրջ պայմաններ են պետք երկրում: Մշտապես անհրաժեշտ է մի իմպուլս, դրդող ուժ, քանի որ աշխարհում չկա այդպիսի փորձ, որ այդ շարժումը պարտադիր պետք է ինքնաբուխ լինի, նամանավանդ այնպիսի երկրներում, որտեղ հողօգտագործողների տարածքը 2 հա-ից պակաս է: Կարևորն այն է, որպեսզի մենք տեսնենք նոր որակի հարաբերություններ, երբ ֆերմերները մրցակցային փոխհարաբերություններից անցնում են համագործակցայինի: Սա մտածողություն է, գաղափար, որը հասունացնելու համար անհրաժեշտ են պայմաններ, օրինակ՝ լիդերի ինստիտուտի ձևավորումը:

Ի. Առաքելյան_*(Պաշտոնական մեկնաբանություն)* Ինչպես Դուք իրավացիորեն նշեցիք Ձեր զեկույցում, այսօր ֆերմերներն իսկապես ունեն տեղեկացվածության պակաս: Այն հաջողված կոոպերատիվները, որոնց մասին Դուք հիշատակում էիք, ստեղծվել են «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակում, և դրանց ստեղծման շարժառիթն այն է, որ ծրագիրը 50 տոկոս համաֆինանսավորում է տալիս (գյուղտեխնիկա, սարքավորումներ և այլն): Սակայն կան դեպքեր, երբ ամեն ինչ ավարտվում է, երբ տեխնիկան տեղ է հասնում: Ես համաձայն եմ, որ միայն հարկային արտոնություններ տալով խնդիրը չի վերանա: Իմ կարծիքով կոոպերատիվը պետք է դառնա արտադրող, առաջին փուլի վերամշակող, որպեսզի այդ միավորումը ֆերմերի համար եկամտի լրացուցիչ աղբյուր հանդիսանա, հակառակ պարագայում հողատարածքների միավորմամբ նրանք իհարկե որոշակի ծախսերի տնտեսում կունենան, սակայն այնուհետև բախվելու են իրացման խնդրին: Գյուղացին պետք է հումքը վերամշակելու հնարավորություն ունենա, և ինքն էլ զբաղվի իրացման հարցով: Եթե մենք կարողանանք կոոպերացիայի հարցը հասցնել մինչև իրացում, իհարկե այս դեպքում նաև պետք է շատ գրագետ

կառավարիչներ աշխատեն, կոոպերատիվը նրանց ձեռնտու կլինի: Այսօր ֆերմերը մնացել է միայնակ մթերողի, խոշոր գնորդի դեմ: Եթե կազմակերպող չլինի, մարզպետը, գյուղապետն այս խնդրում չներգրավվեն, մենք ինչ օրենք էլ գրենք, չի աշխատելու:

Նախարարն առաջարկել է խորհրդի բոլոր այն անդամներին, ովքեր կարծում են, որ օրենքը թերի է և չի նպաստում կոոպերացիայի շարժման խթանմանը և ունեն առաջարկներ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ, դրանք գրավոր ներկայացնել նախարարության աշխատակազմ:

ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇՎԵՑ.

1. **Առաջարկել խորհրդի անդամներին գրավոր ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ ներկայացնել «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին իրենց առաջարկությունները:**
2. **Հավանություն տալ խորհրդի անդամ Ա. Թարվերդյանի առաջարկին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում խորհրդի շահագրգիռ անդամների և գյուղացիական տնտեսությունների մասնակցությամբ քննակում կազմակերպելու վերաբերյալ, և քննարկումների արդյունքները ներկայացնել խորհրդի նախագահին:**

Օրակարգի երկրորդ հարցի զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի անդամ, «Էկո Գլոբ» ՀԿ-ի նախագահ **Ն. Դարբինյանը**: (զեկույցը կցվում է)

Ն. Դարբինյանը նշեց, որ օրգանական գյուղատնտեսությունն առաջին անգամ ներկայացվել է Հայաստանում 2002թ.: 2012 թվականի տվյալներով՝ օրգանական գյուղատնտեսության արտադրության ընդհանուր տարածքը մեր երկրում կազմում է 19 000 հա: Ներքին շուկան թույլ է զարգացած: Հայկական օրգանական արտադրանքի առաջին արտահանումները սկսվել են 2008թ-ից, ծավալները ժամանակի ընթացքում աճում են, սակայն քանակն ու մատակարարման պարբերականությունը դեռևս բավարար չեն: Զեկուցողը հավելեց, որ Հայաստանում արտադրվող օրգանական գյուղմթերքը մրցակցային է արտերկրի շուկայում, ունի արտահանման լայն հնարավորություններ, սակայն այսօր ծավալները շատ փոքր են, առաջարկը հետ է մնում պահանջարկից, ոլորտը զարգանում է ինքնաբուխ կերպով, որտեղ հիմնական շոգեքարշները մասնավոր ընկերություններն են՝ օրգանական գյուղատնտեսության ընդլայնման հարցում կարևորելով պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցության հարցը: Զեկուցողը անդրադարձել է նաև սպառողների շահերի պաշտպանության խնդիրներին, ինչպես նաև հանդես է եկել մի շարք առաջարկություններով: Մասնավորապես առաջարկվել է մշակել Օրգանական

գյուղատնտեսության ազգային պլան՝ ճյուղի զարգացման քաղաքականության համակարգված կիրարկումն ապահովելու համար:

Զեկույցի վերաբերյալ ելույթներ ունեցան, առաջարկություններ և հարցեր ներկայացրեցին **Ռ. Ծառուկյանը, Ն. Մանուկյանը, Ա. Ղազանչյանը, Ս. Ստեփանյանը:**

Ռ. Ծառուկյան-Առ այսօր քանի՞ տնտեսություն ունենք, որոնք արտադրում են էկոլոգիապես մաքուր մեղր ՀՀ-ում, և ո՞ր տարածաշրջանում: Ուսումնասիրություններ են իրականացվել ներքին շուկայում, մանրածախ առևտրի կենտրոններից տարբեր ընկերությունների արտադրած մեղրի նմուշառում է կատարվել և լավագույնը ճանաչվել է «Մուլտի Ագրոյի» մեղրը, դուք ունե՞ք այդ մասին տեղեկություններ:

Ն. Դարբինյան-Մոտ 6 տնտեսություն ունենք Կոտայքի, Արարատի մարզերում, Ղարաբաղում: Արտադրության ծավալները փոքր են, բայց պոտենցիալը Հայաստանում օրգանական մեղր արտադրելու բավականին մեծ է: Ձեր աշխատողները մեզ պարբերաբար այցելում են, մենք բացատրում ենք սերտիֆիկացման ընթացակարգը, սակայն այնուհետև որևէ արձագանք չի լինում:

Ն. Մանուկյան-Մենք Հայաստանում փորձում ենք զարկ տալ գաստրոնոմիական տուրիզմին, քանի որ նշում ենք, որ ունենք էկոլոգիապես մաքուր սնունդ, ինչը գրավում է զբոսաշրջիկներին: Սակայն երկրում ունենք զանազան էկոլոգիական խնդիրներ, արդյո՞ք այստեղ ամեն ինչ ճիշտ է ասվում, և մենք կարող ենք վստահ լինեն, որ անգամ մեղրը էկոլոգիապես մաքուր է:

Ն. Դարբինյան-Օրենքը սահմանում է, որ եթե որևէ արտադրանք կոչվում է էկոլոգիապես մաքուր, բիո, օրգանական, պետք է համապատասխանի շատ խիստ սահմանափակումներով ստանդարտների, իսկ դրանք շատ ավելի խիստ են, քան այն, ինչ պահանջվում է սովորական արտադրության պարագայում: Եվ ինքնահայտարարությունները, բարձրագոչ արտահայտությունները, որ մենք արտադրել ենք էկոլոգիապես մաքուր մթերք, սպառողին մոլորության մեջ գցելու նպատակ են միայն հետապնդում:

Ա. Ղազանչյան-Ես համամիտ եմ, որ օրգանական մթերքը չի կարող մեծ մասնաբաժին ունենալ շուկայում, պետք է բավարարվենք օպտիմալ քանակներով, և պետք է այնպես անենք, որպեսզի այն արտացոլի իրականությունը: Բացի օրգանիկից, մենք ունենք մեր ավանդական հայկական մթերքները, խոսքն այսպես կոչված «slaw food»-ի մասին է, և մենք պետք է քայլեր ձեռնարկենք պահպանելու մեր տեղական արտադրանքը: Մենք վերջերս Եվրոպայում էինք, բոլորը «լացում են». այնտեղ տեղական գյուղմթերք չի մնացել, անգամ Բուլղարիայում տեղական խնձոր չկա: Այնպես որ այս հարցին էլ պետք է ուշադրություն դարձնել, և եթե մթերքը օրգանիկ չէ, դեռ չի նշանակում, որ վատն է: «Գաստրոնոմիական տուրիզմը» պետք է հիմնված լինի հենց այդ ավանդական, տեղական սննդի վրա և ոչ թե էկոարտադրանքի:

Ս. Ստեփանյան-Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել տիկին Դարբինյանին հատկապես վերջին երկու տարիների ընթացքում իր և իր ղեկավարած կազմակերպության ծավալած գործունեության համար: Լուրջ աշխատանք եք իրականացնում, ցանկանում եմ հաջողություններ մաղթել: Ես կարծում եմ, որ օրգանական շուկայի զարգացումը շատ բնական պրոցես է, և մեզ պետք չէ այն արհեստականորեն ընդլայնել, ով կցանկանա, կձգտի, թող հասնի, ով չի կարող, պարտադիր չէ: Նաև իրազեկման կարգով ցանկանում եմ նշել, որ ՀՀ-ում արտադրանքի մակնշման համար «էկո» անվանումը արգելվում է օգտագործել որպես որակ բնորոշող բառ, և բոլոր այն տնտեսավարողները, որոնք օգտագործել են այդ տերմինը, տուգանքներից հետո ուղղակի չակերտների մեջ են վերցնում այդ բառը: Այստեղ կա օրենսդրական լուրջ բաց:

Ի. Առաքելյան-(*պաշտոնական մեկնաբանություն*) Մենք պետք է հետևողական և խիստ պայքար տանենք սպառողների շահերի պաշտպանությունն ապահովելու համար: Այսօր ներքին շուկան այնքան մոլորված է, որ էկոլոգիական արտադրանքը գնահատելու հարցն էլ է խնդիր, արտահանման տեսանկյունից այն առավել շահեկան կարող է լինել: Կարծում եմ, որ մենք պետք է քայլեր ձեռնարկենք խստացնելու օրենսդրությունը, և տնտեսավարողը չպետք է իրավունք ունենա անգամ ապրանքանիշի անվանման մեջ օգտագործել «էկո» տերմինը:

ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇՎԵՑ.

Ի գիտություն ընդունել Ն. Դարբինյանի զեկույցը «ՀՀ-ում օրգանական շուկայի ներկա իրավիճակը, խնդիրները և հնարավորությունները» թեմայով:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ի. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Ս. ՍԻՄՈՆՅԱՆ**